կախած ու տակը չեն գտած, այժմ Լս ջուր ունի. կասուի թէ սորա հանդէպը գտնուած մեծ սարի միջէն ներքնուղի մի բացած և Շեռեանայ տակից անցնելով բերդիս գլուխն ջուր բարձրացուցած են։

Սորա շուրջն նաև կը տեսնուին տեղ տեղ ժայռի մէջ կոփուած աղ, ցաւար և էն. մանրելու համար։

Խալեազի մէջ երբ շրջես, լեռ և ձոր, սար ու քար, թուփ ու ծաղիկ, ջուր և մարգագետին երեսիդ կը ժպտին, դու կը խայտաս, գիտես որ ամեն կողմդ հայութիւն կը բուրէ, խրոխտալով պիտի շրջես, դու զքեզ պիտի կարծես Մեծին Տիգրանայ դարու մէջ, աղօթէ որ քեզ մի քուրդ չպատահի, եթէ մի հատ տեսար, պիտի տեսնես յանկարծ Հայի ու Հայաստանի վրայ սևը պատեց, ամեն զուարճալի տեսարաններ տխրալի կերպարանք առին։

Խալեազի վերայ ուրիշ անգամ Լս պիտի գրեմ։